ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 փետրվարի 2014թ. թիվ 54-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի ԹԻՎ 149-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Լոռու մարզպետարանում կատարված կադրային փոփոխությունները՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2013թ. օգոստոսի 30-ի «Լոռու մարզում բնակչության տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 149-Ա որոշման հավելված 3-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. «Գարիկ Տոնոյան - խմբի ղեկավար, մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների գործունեության կազմակերպման պատասխանատու» բառերը փոխարինել «Գարիկ Տոնոյան - խմբի ղեկավար, Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ» բառերով:

2. «Վազգեն Օհանյան» բառերը փոխարինել «Արտյոմ Շահվերդյան» բառերով:

3. «Միքայել Կիրակոսյան - մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել «Սվետլանա Առաքելյան - մարզի զարգացման ծրագրի մշակման և իրականացման համար անհրաժեշտ կարևոր էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանների կազմման աշխատանքների պատասխանատու» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. փետրվարի 24
ք.Վանաձոր